ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 մարտի 2024 թվականի N 333 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱ-ԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի N 1183-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի «Պետություն-մասնավոր գործընկերության ընթացակարգը, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և կառավարման կարգը հաստատելու, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները, պետություն-մասնավոր գործընկերության ստորաբաժանումը, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության ձևը և ներկայացման ժամկետը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 1241-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1183-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) որոշման հավելվածի՝

ա. 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Գնահատող հանձնաժողովի կազմը բաղկացած է առնվազն հինգ անդամից: Գնահատող հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստերի (այդ թվում՝ առցանց) միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են (այդ թվում՝ առցանց եղանակով) հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը: Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ՝ նիստից առնվազն 1 (մեկ) աշխատանքային օր առաջ հանձնաժողովի անդամներին գրավոր (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով) ծանուցելու եղանակով:»,

բ. 71-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ որոշմամբ որակավորման հայտերի ներկայացման համար կարող է սահմանվել ավելի սեղմ ժամկետ՝ հաշվի առնելով ՊՄԳ ծրագրի առանձնահատկությունները կամ սույն ընթացակարգի համաձայն՝ դրա հաստատմանը նախորդած շուկայի հետ նախնական հաղորդակցումը:»,

գ. 71-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 71.1-ին կետով.

«71.1. Մինչև որակավորման հարցման հաստատումը գնահատող հանձնաժողովը կարող է իրականացնել խմբագրական բնույթի փոփոխություններ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ